

ՀԱՅՈՑ ԱԶԳԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ

Մեր կաթոլիկ հայրերը մեծ ծառայութիւններ են-
մատուցել մեր պատմութեան և գրականութեանը վեր-
ջին քանան և հինդ տարուայ ընթացքում, բայց նրանց
տպարանից շատ քիչ գրքեր են գուրս եկել, որ բոլորու-
վին զերծ լինին նեղ կրօնական ոգուց։ Շատ գնահատե-
լի տշխատութիւններ յաճախ կորցնում են իրենց նշա-
նակութիւնը այն պատճառով, որ շատ արժէքաւոր գըր-
քերում այսուամենայնիւ մենք հանդիպում ենք ոտնձգու-
թիւնների լուսաւորչական եկեղեցու դէմ։

Այս անդամ մենք առիթ ունինք խօսելու և գլխա-
ւորապէս ծանօթացնելու մի գրքի բովանդակութեան
հետ, որ թէև ոչ կաթոլիկ հոգեսորականի, այլ կաթոլիկ
մի հայի գրուածք է, բայց ամբողջ հայութեան համար
մի շատ գնահատելի գործ է և հայ գրականութեան
պարձանքներից մինը պէտք է ընդունել ու աղատ է յի-
շեալ պակասութիւններից։

Երկու տարի սրանից առաջ Վենետիկի սուրբ Ղա-
զարու վանքի տպարանից լոյս աշխարհ եկաւ Միքայէլ
փաշա Փորթուգալի ուսումնասիրութիւնը, որ կրում է
«Եղիշէ վարդապետի վասն Վարդանայ և Հայոց պատե-
րազմին և քննադատութիւնը» վերնագիրը։ Այս գիրքը
այնքան հարուստ է իւր բովանդակութեամբ և այնքան
հետաքրքրուկան, որ սեպուհ պարտականութիւն ենք
համարում մեր ընթերցողներին հաղորդելու նրա մասին
գէթ ամենահամառօտ տեղեկութիւններ։ Լիովին ծանօ-
թացնել այս գրքի հետ անկարող ենք, որովհետև գիր-

քը մօտ հինդ հարիւր երեսից բաղկացած մի մեծահատոր աշխատաթիւն է և այնքան կարևոր մի հետազօտութիւն, որ միմիայն անմիջական ընթերցանութիւնը կարող է այս մասնագիտական դրվի մասին արժանավայել հասկացողութիւն տալ:

Դիրքը բաղկացած է երկու մասերից. Առաջին մասը, որ նախադրութիւն է կոչուած, ընորոշում է Եղիշէին իրեւ մատենագիր և պատմաբան, խօսում է Յաղկերտի մեծ նախարարապետ և խորհրդատու Միհրներսէհի, Յաղկերտի, Սասանեան իշխանութեան, Աքեւեան կայսրութեան և Թէոդոս յոյն կայսեր, Վասակի, Հայոց քաղաքակրթութեան և Եղիշէի կենսագրութեան ու նրա ուրիշ գրուածների մասին. Նոյն այս առաջարանի մէջ գիտնական փաշան ամփոփել է պարսից լեզուի և կրօնի մասին իւր ժամանակուայ գիտնական տեղեկութիւնները հետաքրքրական նկատողութիւններով հանդերձ:

Գրքի երկրորդ բաժինը պարունակում է Եղիշէի պատմութեան ընագիրը հեղենակի բազմաթիւ պատմական, լեզուագիտական, աշխարհագրական և այլ քննական հարուստ ծանօթութիւններով; բայցարութիւններով և համեմատութիւններով:

Առաջին միաքը, որ ծագում է ուշագիր ընթերցողի գլխում, այս գիրքը կարդալուց յետոյ՝ այն է, որ հայ ազգի պատմական վիճակը, նրա հոգեբանութիւնը, նրա ընաւորութիւնը, նրա բազաքական դրութիւնը կարծես մի մազիչափ չէ փոխուել Եղիշէի օրերից, այսինքն հինգերորդ գարու կիսից մինչև մեր օրերը: Նոյն հալածանքները, նոյն Յաղկերտաները, նոյն հայութեան ոսոխ կուսակաները և հայութիւնը ոչնչացնելու ձգտումները, նոյն յուսահատակոն և ուժգին գիմագրութիւնը, նոյն երկպառակութիւնները, քաղաքական խելքի նոյն պակասութիւնը մեր ազգի մէջ, որպէս և մեզ տիրող ազգերի կողմից հայի էական յատկութիւնների կատարեալ անդիտութիւնը, նոյն կովկը ձեռք բերած բաղա-

քակրթութեան համար և հոգևորականութեան կատարած դերը. Այս բոլոր երեսյթների դիմանական մի որոշ բացատրութիւն սակայն մենք գտնում ենք Միքայէլ փաշայի աշխատութեան մէջ.

Հայաստանը իւր աշխարհագրական դիրքի շնորհիւ միշտ գտնուել է զօրեղ հարեւան պետութիւնների մէջ տեղ, իսկ ներքուստ բաժանուած լեռներով բազմաթիւ գաւառների: Հիւսիսից էլ հարեւան է ունեցել կիսավայրենի ցեղեր: Երկրի մէջ չէ եղել մի որև է լայն և բաւականաչափ տափարակ գաւառ, ուր կարողանար զարդանալ պետական մի որև է հաստատուն կազմակերպութիւն և նուաճէր միւս իշխանութիւնները: Այս պատճառով Հայաստանի պետական կազմակերպութեան նախական ձեւը Եղիշէի նկարագրած ժամանակի հէնց սկզբեց տանուտիրական էր (Փեօճալեհեան), ուր իշխանները երկրի անկախ սեփականատէր են եղել և անուանական կապ են ունեցել թագաւորական տոհմի հետ, եթէ երբեկցէ թագաւորը մինչև անդամ մի կարճ ժամանակով կամեցել է ինքնիշխան լինել: Երկիրը խիստ կերպով բաժանուած լինելու պատճառով ամեն մի գաւառի իշխան և ժողովուրդ խիստ տարբերուել է միւս գաւառներից իւր ընաւորութեամբ, որից առաջացել է հայի ծայրահեղ անհատականութիւնը, իսկ միւս կողմից էլ անկախութեան սէր և սէր դէպի տեղական հայրենիրը: Այս է եղել պատճառ, որ ոչ մի ազգի մէջ այնպէս խիստ կերպով չէ զարգացած գաւառական հայրենասիրութիւնը, որպէս հայի մէջն Քրիստոնէութիւնը ընդունելուց յետոյ հոգևորականութիւնը շատ շուտով մեծ ոյժ ստացաւ այն պատճառով, որ կրօնը տարածուել է բոլոր գաւառներում և հոգևորականութիւնը ընականաբար աւելի շատ է գործ ունեցել զբքի և դիտութեան հետ, ուստի և եղել է թէ իշխաններից և թէ ժողովրդից աւելի զարգացած և մտաւորապէս աւելի զօրեղ գասակարդը: Այս պատճառով էլ նա ահագին ազդեցու-

թիւն է ունեցել ժողովրդի վրայ, որի և պաշտպանը ու սպասաւորն է եղել:

Այս է պատճառը, որ ազգի գոյութեանը վտանգ սպառնալու բողէներին՝ հոգեսորականը աւելի դիւրագգաց է եղել և առաջնորդ ազգի ինքնոյրունութիւնը պահպանելու գործում: Բողօքի և ապստամբութեան նոյն իսկ առաջին նշանաբանը այսպիսի ժամանակներում համարեա միշտ բարձրացնողը եղել է հայ հոգեսորականը: Այսպէս երբոր մոգերը պարսից զօրքի հետ մտան Բագրեանդ և Անդղ գիւղում կամեցան կոտրել եկեղեցու դուռը՝ Ղետնդ երէցը առանց նախարարների հաւանութեան, առանց նոյն իսկ եպիսկոպոսների հետ խօրհըրդակցելու՝ ժողովրդի հետ յարձակում է գործում մոգերի վրայ և սարսափեցնելով նրանց ցրում է: Այստեղից է ապստամբութեան սկիզբը: Ահա թէ ինչու Գենշապուհը Ղետնդին է համարում հայ ազգի թշուառութեան պատճառը և ուղղում է Ղետնդ երէցին հետևեալ խօսքերը ըստ Փարպեցու: «Եւ իքո խրատուէ աւելի ևս կորեաւ աշխարհն Հայոց»:

Ոչ միայն ապստամբութեան սկիզբը հայ քահանան է դնում, այլ և պատժուելու ժամանակ էլ առաջինն է բարձրանում դահճի սրի առաջ:

Երբոր պարսից ատեանը դատապարտում է մահուան ապստամբներին՝ նոյն Ղետնդ երէցը առաջարկում է կաթողիկոսին, որ նա առաջինը գլխատուի, ասելով նրան «Մատիր, յառաջեա լնդդէմ սրոյն, զի դու աստիճանաւ ՛փ վեր ես քան զամենեսեան»:

Այսպէս հայ հոգեսորականութիւնը Վարդանանց պատերազմի ժամանակ երկրի տէրն է և պատասխանաւուն, ժողովրդի սպասաւորն էր և տէրը:

Եղիշէի խօսքերով Արշակունեաց թագաւորութեան բարձուելուց յետոյ եկեղեցականութիւնը լիովին իշխող էր երկրում: Եկեղեցականութիւնը այնքան զօրեղ էր, որ կարող էր Աստուծոյ պատուիրամները ուրացողի

դէմ զինել նրա մտերիմներին, որոնք հնազանդւում էին հոգեսորականի հրամանին: «Ձեռն եղօր հարազատի ի մերձաւոր իւր լիցի՝ որ անցեալ լիցէ ըստ ուխտ պատուիրանին Աստուծոյ, և մի խնայեսցէ հայր յորդի, և մի ակն առնուցու որդի հօր պատոյն. կին կռուեսցի ընդ առն ամուսնոյ, և ծառայ դարձցի ընդդէմ տեառն Փիւրոյ. օրէնք աստուածային կացցեն թագաւոր ի վերայ ամենայնի, և ի նմին օրինաց ընկալցին յանցաւորք պատիժս դատապարտութեան»:

Երբոր արդէն քրիստոնէութիւնը այսքան խոր արմատներ էր գցել հայ երկրի մեծագոյն բաժնի մէջ՝ ահա այսպիսի ժամանակ քաղաքական հանդամանքների շնորհիւ պարսից Սասանեան արքունիքում միտք ծագեց ոչնչացնել այդ ոյժը և հայերին աւելի սերտ կապելու համար Պարսկաստանի հետ՝ Յազկերտի իմաստուն խորհրդատուն կամեցաւ քրիստոնէութիւնը ջնջել Հայաստանից:

Հայերը իբրև քրիստոնեայ ժողովուրդ աւելի յարաւում էին դէպի յոյները: Ռոպէն էլ յարմարաւոր էր: Բիւզանդական Յունաստանը Թէոդոս կայսեր ժամանակ արդէն թուլանում էր. կայսրը ինքն էլ. ապիկար մի մարդ էր և այս հանդամանքների մասին Հայաստանում ոչինչ հասկացողութիւն չունէին և կարծում էին, որ դարձեալ քրիստոնեայ Բիւզանդիօնը անօգնական չի թողնի կրօնակից մի ժողովուրդ: Բայց մէթէ բոլոր Հայոց պատմութիւնը քաղաքագիտական մեծամեծ սխալների մի անվերջ շարք չէ: Միթէ դեռ մի քանի տարի առաջ նոյնպէս քրիստոնեայ Եւրոպայի քաղաքական ճգտումներին և քաղաքագիտական հարցերի անծանօթութեան շնորհիւ չէր, որ տաճկական կոառըածների զոհ եղանք մենք:

Այս, նոյն վիճակն է և այսօր: Նոյնպէս հզօր տէրութիւնների ճգտումների առարկայ, նոյնպէս մեր հայրենիքը կռուածաղիկ օտարների, նոյնպէս մեր դրութիւն

նը երկդիմի և վասնգաւոր։ Յազկերտ թագաւորի իւմաստում հազարապես Միհրներսէհը նոյնպէս կարծում էր, որ հայ ժողովուրդը իշխանութեան հնազանդ և հաւատարիմ պահելու համար կարևոր է նորա կրօնը, լեզուն և էութիւնը խանգարել և հնարքով կամ բռնութեամբ տիրով ազգին նմանեցնել, Յոյներից բոլորովին օտարացնելու համար էր, որ պարսիկները աշխատում էին մեր նախահայրերին կրակապաշտ դարձնել։ Հազար Փարպեցին թագաւորին Միհրներսէհի տուած խորհուրդը հետեւեալ կերպով է պատմում. — «Գիտէք զաշխարհն Հայոց՝ թէ սրպէս մեծ է և պիտանի, և մօտ սահմանակից է կայսեր իշխանութեան, և զօրէնս և պաշտօն զնոյն ունի, զի կայսր զիշխանութիւն նոցա ունի, և եթէ մերոց օրինաց ընտանեցուցանեմք զնոսա և ընդելնուն... այնուհետև զձեզ սիրեն և զԱրեաց աշխարհն ընդ մեր սերտ սիրով և միաբանութեամբ»։

Սյապէս բանից դուրս է գալիս, որ Պարսից Սասանեան մինչև անգամ շատ խելացի աշխարհակալները մեզ հալածելու միտք էին յղանում յոյներից մեզ հեռացնելու համար, որովհետև մենք առանց որևէ է օգուտ ստացած լինելու յոյներից միշտ սակայն ձգում էինք յունուկան կրթութեան և քաղաքականութեան Զարմանալի է, որ Հայաստանի արևմտեան մասը աւելի էր ճնշուած յոյներից քան արևելեանը պարսիկներից, ուրոնք երկար ժամանակ մեր երկիրը կառավարում էին Արշակունի հայ թագաւորներով, իսկ յոյները միշտ յոյն կուսակալներ էին զնում և ամեն կերպ աշխատում էին մեռցնել հայի ազգային ինքնուրոյնութիւնը։

Պատկերը բոլորովին համապատասխան է մեր ներկայ քաղաքական դրութեան։ Թուրքիայի կատարած դերը մեր վերաբերմամբ բոլորովին նման է Յազկերտ պարսից թագաւորի նպատակներին, որ ուժով կամենում էր հայ քաղաքակրթութիւնը և հայ տարրը ոչնչացնել, որովհետև վախենում էր հայի համակրութիւնից դէպի

յոյնը և Եւրոպան։ Եթէ հայը հտմակրութիւն չտածէր գէպի և րոպական քաղաքակրթութիւնը՝ Պարսկաստանը աւելի համբերող էր, աւելի ինքնուրիոյնութիւն է տալիս մեզ քան նոյն յոյները, որոնց սիրելու պատճառով մենք հալածանքի ենթարկուեցինք գարերի ընթացքում։ Բայց այսօր միթէ նոյնը չէ, միթէ մեզ չեն կոտորում և րոպական քաղաքակրթութեան ձգտելու համար և մեր ապերախտ հաւատակիցների շնորհիւ, որոց չենք դադարում համակրելու։ Միքայէլ փաշան ասում է, որ մենք այժմ, երբ կարող ենք հանդարտ և անկողմնակալ աչքով տեսնել այն ժամանակուայ գործերը, պէտք է սըսալմունք համարենք մեր նախնիքների ատելութիւնը պարսից գէմ և գէպի յոյները ունեցած համակրութիւննը։ Սասանեան տէրութիւնը թէև աւելի կենդրոնացած էր և նահանգները կառավարուում էր ժառանգաբար որդուոց որդի յաջորդող կուսականներով, բայց Հայաստանը, Վրաստանը և Աղուանքը առանձին վիճակ ունէին և բընիկ ազդային իշխանների ձեռքով էին ապրում, որ միմիայն հարկատու էր Պարսից։ Սակայն անխաղաղամէր նախարարները իրանք խնդրեցին պարսից մարզպանութիւն մտցնել երկրի մէջ։ Նախարարների մի մասի անհայրենասիրական քաղաքականութիւնը յայտնի չափով բացատրուում է հոգեորականութեան ուժեղանալով։ Հոգեորականութիւնը ահազին ազգեցութիւն ունէր քաղաքական գործերի վրայ ևս։ Արքայական աթոռի հետ գուգընթացաբար զարգացել էր Հայաստանում կաթողիկոսական աթոռը, որի տէրը թագաւորի պէս Արշակունի Պարթև իշխանական ցեղից էր սերւում և ժառանգաբար գահի էր արժանանում։ Հոգեորական իշխանութեան խորհրդով էին նշանակուում շատ սպարապետներ, իշխաններ և երեքն էլ թագաւորներ։

Դրացի հզօր թագաւորները նրանց ինդիրը և միջնորդութիւնը աւելի էին յարգում քան աշխարհական իշխաններինը։ Այս հանգամանքը, ասում է Միքայէլ փա-

շան, յայտնի նշանակութիւն ունի բացատրելու համար՝ թէ ինչու կային նախարարներ, որ Վասակի հետ միասին համամիտ էին կրակապաշտութիւն մտցնելու մեր երկիրը, Բացի այս՝ նախարարների շատ տոհմեր գեռիսկական քրիստոնեաներ չեին և այս պատճառով ենթարկում էին հոգեսորականութեան կշտամբանքներին։ Հոգեսորականութեան հակառակ իշխաններից էր և Վասակ Սիւնեաց իշխանը, որ ձգտում էր Սիւնիքի թագաւորական դահը ձեռք բերելու։

Բայց թէ ինչու համար Վասակը կարողացաւ Սիւնեաց աշխարհում բազմաթիւ նախարարներ և համակրութիւն և գաղափարակիցներ գտնել յօդուտ պարսից արքունիքի՝ այս մասին մեր հեղինակը ասում է, որ թէպէս և Տրդատի զօրութեան ահից Ախականի լեռնոտ երկրում քրիստոնէութիւնը մուտք գտել էր, բայց իրաք գեռ հեթանոսութիւնը յարատեում էր իւր գոյութիւնը։ Այստեղ էլ հոգեսորականութիւնը ամեն կերպ աշխատում էր սակայն իւր աղղեցութիւնը զօրեղացնելու և այս երկրում, ուստի և տիրել ժողովրդին և զօրութեամբ գերազանցել իշխաններին։ Բացի այս հոգեսորականութեան յաղթանակը կնշանակէր և Մամիկոնեան տան յաղթանակ, որ բոլորովին ցանկալի չէր Վասակին, որովհետեւ առանց այն էլնախարարների մեծամասնութիւնը և հոգեսորականութիւնը աւելի կապուած էր Վարդանի հետ։ Եթէ Վասակը միանար Վարդանի հետ և եթէ ազգային անկախութիւնը ընդհանուր ուժերով վերահաստատուէր իսկ՝ Վասակը պիտի դառնար նշանաւոր նախարարներից մինը և այսուամենայնիւ Վարդանից ոչ զօրաւոր և ոչ էլ ժողովրդական։

Իսկ դառնալով Յազկերտի մտադրութեանց կուսակից և հաստատելով Հայաստանում կրակապաշտութիւն, նա յօյս ունէր պսակելու իւր գլուխը Հայաստանի թագով։ Կային եւ մասնաւոր պատճառներ, որ ստիպում էին Վասակին հայրենիքի և ազգի կորուստը ընտրելու և ոչ զօհելու սեփական փառասիրութիւնը և ոխը։ Նրա

Արկու որդիրը թարիկը ու Ատրներսեհը այդ ժամանակ Յաղկերտի արքունիքում պատանդ էին. Սակայն ոչ Յաղկերտը և ոչ նոյն իսկ Վասակը ոչինչ հասկացողութիւն չունէին հայ ժողովրդի հօգեկան և բարոյական եռանդի պաշարի մասին և ոչ էլ գիտէին, որ հայի ներքին անկախութեան սէրը չափաղանց մեծ է։ Մինչև այսօր էլ մեզ տիրապետող ազգերը այս պատմական իրողութիւնը լաւ չդիտեն։ Ոչ Յաղկերտը և ոչ նոյն իսկ Վասակը չէին կարծում, որ հայ ժողովուրդը կատաղի դիմադրութիւն ցոյց կտայ իւր հաւատը ճնշողներին։ Վերջը պարզուեցաւ, որ Յաղկերտին խաբել էին և հաւատացրել, որ հայերը առանց ապստամբութեան կընդունեն կրակապաշտութիւնը։ Այս երկում է նրանից, որ թագաւորը սաստիկ ստրջացաւ հայկական ապստամբութեան վրայ և խոստացաւ Վասակին դատաստանի մատնել, երբոր տեսաւ թէ ինչպէս եկեղեցականների հրամանով Հայաստան աշխարհը, արք և կանայք մի սիրտ, մի հօգի դառած, զէնքը ձեռքներին արհամարհեցին Սասանեան ահեղ պետութեան հրամանը։ Վասակի խարերայութիւնը իմանալուց յետոյ Յաղկերտը «բարկացաւ յոյժ և ի խոր քիոցեցաւ և դառնացաւ յանձն իւր և ասէ անսուտ երդումամբ։ Եթէ ապրեսցէ անօրէնն այն ի մեծ պատերազմէն, մեծաւ անարդանազ տամ ըմպել նմա զբաժակն «դառնութեան մահու»—և Յաղկերտը սրանից հազարաւոր տարիներ առաջ աւելի իմաստուն գահակալ էր քան մեր ժամանակի սուլթան Համբայները, որովհետեւ նա արդարեւ իրեն խարող նախարարներին և զօրապետներին դատի էր ենթարկում և պատժում, այլ ոչ չքանչաններով զարդարում նրանց։

Գալով հեղինակի կարծիքին Եղիշէի պատմագրի մասին՝ դիտելու է, որ ըստ Միքայէլ փաշայի, Եղիշէի գիրքը թէ ազգային վէպի բոլոր բարեմասնութիւններն է կրում, նրա զգացմունքները սրտաշարժ են և գողտրիկ, բայց նրա երկը ի վերայ այսր ամենայի ժամա-

նակի հանգամանաց և սովորութեանց ճշմարտատիպ պատկերն է։ Այս դրքի մէջ, ասում է հեղինակը, դուք կը տեսնէք Սասանեանց դատաստանական և վարչական ձեր, դրացի ազգի ով լինելը, նրա փոխադարձ վերաբերմունքը, Հայոց կանանց վիճակը, առտնին կեանքը, զարդարանքը, կարասիքը, կերակուրները, որպէս և կիմանաք թէ հայ ժողովուրդը քանի տեսակ մարդիկներից է կաղմուած, ի՞նչ էր իւրաքանչիւրի վիճակն ու դործը, որչափ և ի՞նչ տեսակ հարկեր կհատուցանէին, ի՞նչ դրութեան էր երկիրը և այլն և այլն։

Միենայն ժամանակ Եղիշէն Եկեղեցական հաւատացող վիլիսոփայ է։ Որքան էլ սակայն նա կրօնական բուռն զգացմունքներով է տողորուած, սակայն նա ճշմարտապատում է, Բարիկութիւնը չի կուրացնում նրան, նա սիրելիների սխալանքը պատմում է, որպէս և ատելիների բարեմասնութիւնները, թէև միշտ հաւատարիմ է իւրայն գաղափարին որով քրիստոնէութեան զարգանալուն ցանկացող է, սիրելի է և գովելի նրա աչքում, իսկ ամեն հաւատի թշնամի սև և ժանդ։

Գրքի միւս գլուխները վերաբերում են պարսից հին կրօնին և լեզուին։ Հեղինակը շատ մանրամասն տեղեկութիւններ է տալիս, մանրակրկիտ բայցատրութիւններ և ծանօթութիւններ է հաղորդում, որպէս և Վարդանանց պատմութեան բնագրին կցած են բազմաթիւ հետաքրքրական յաւելուածներ, լեզուագիտական, աշխարհագրական և պատմական համեմատութիւններ և գիտողութիւններ։ Գրքի այս բաժինները գլխաւորապէս մասնագիտական հետաքրքրութիւն են շարժում, ուստի և Եղիշէի պատմագիրը մի անգամ ևս կարդալ ցանկացողին խորհուրդ ենք տալիս անպատճառ կարդալ Միքայէլ փաշայի այս նշանաւոր գիրքը։

Գ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ